ղեցական արարողութիւնն, մկրտութիւնն, վերջի օծումն, թաղումն և զատկական սրբութիւն առնելն ամէն ազգ իւր եկեղեցին. վասն որոյ ամէն ազգէ մէկ մէկ քուռաթ կարքէցին, հանգերձ քննութեամբ առաջի կարտինալ Վիքարին. վասն մեր ազգի տէր գրիգորն ոչ կամեցաւ յանձն առնուլ քուրաթ լինիլն, վասն որոյ մեր կարտինալն զստեփան վարդապետն առաջ էած. նախ քան զայս, Զ ամիս կայ որ որդորմամբ և աշխատութեամբ տօն տօմէնիքոյին և միջնորդութեամբ կարտինալ Կարաֆային հոյն ըստեփան վարդապետն փռոփականտայի քօլէճն ի վերայ մանկանց հայոց լէքթոր կացուցեալ էին, բայց առանց եկամուտի. վասն որոյ մեր կարտինալն կամեցաւ տէր գրիգորին փառդն սորայ վերայ անել և տէր գրիգորն ճանապարհ դնել ...։

Հոգևոր Տէրն յաժմս յաժմս քննթումաջէի պատճառաւ դիտաւորութիւնն փոխեց վենէտիկ գալու, այս ամսիս վերջն կամի ճանապարհորդ լինիլ ալիկուռնայու վերայով. իրաւի ճշմարիտն ասեմ հայր գերյարգելի որ եզակի և գովութեան արժան մարդ է, եթէ այլ անձանց և այլ տեղաց այլ և այլ բան լսես չի հաւատաս, այլ գրով երբ ժամանակ ունենամ ծանուցանեմ հրամանուցդ զհատկութիւն սորին։...

Աղայ պետրոսն ետ զատկին կամի ճանապարհորդ լինիլ, կարծեմ ինքն գրելոց է հրամանուցդ, եթէ բերէ պատկերներն սորայ հետ ուղարկեմ . . .

խոնարհագոյն ծառայ
[պատկերահան] Յոհաննէս

Հռոմայ, ամի տեառն 1743, Ապրիլի 13

ՃԺԸ.

Բնականաբար ուղղակի պիտի փափագէինք գիտնալ, թէ ինչ պատճառաւ Աբրահամ Պետրոս Ա. չէ կրցած ի գործ դնել Ս. Ղազար գալու դիտաւորութիւնը։ Հետագայ իր իսկ նամակին մէջ այդ մասին զոհացում կը գտնենք։

Նամակագիրս կը տեղեկացնէ նաեւ առ Մխիթար՝ Ս. Գահէն ստանձնած պաշտաման գործադրութեան աւարտումը։ Յատկապէս զիտել կու տանք հոս, որ Աբրահամու բարձր պաշտօնը լոկ Հռովմայ Հայ Եկեղեցականութեան չի հայիր, վասն զի ան կը տարածուի այսպէս. «ի վերայ ուղղափառաց ոչ միայն ի յարևելս այլ և ի Հռոմ»։

1743 ապրիլի 21 [ի Հռովմ]

Գերյարգելի եղբօրդ իմոյ աբբահօրն
Ողջուն

Երևի թէ զրկեցեալ գոլ փափագօղն ի տեսութենէ փափագեցելւոյն. զի Սրբութիւնն[1] սիրոյ և ցաւակցութեան և խրատական կերպիւ ասաց թէ մի գնար ի վէնէնցիեա, վասն զօրաց ոլք կան. եւս նազարէթ[2] սահմանեալ են. զի Գ նազարէթն բաւէ զոր կրեցեր. լինի թէ շուտով վերջ լինի, գոյ յոյս տեսանել զգերյարգելիդ կամօքն ասուծոյ. և պատմէ մեր սիրելի պարոն աղաջա պետրոսն զամենայն իր զոր ետես և լուաւ. և յղեց[ից...][3] զերկու կօնտակն սուրբ փափին. խնդրե[մ..] թար[գ]մանիցէք ի հայ բարբառ և շուտով յղեսցջիք ի Հռոմ ի ձեռն ամենապայծառ վրդանէս եպիսկոպոսին, եթէ կամիք յոյժ հաճելի շնորհ է մեզ. էրէմիեա վարդապետն յարիւն թքնէ. դրի քահանայից իսպի-

1. Այսինքն Բենեդ. ԺԴ.։
2. Lazaret = Զգուշարան (ժանտախտի և այլ տարափոխիկ հիւանդութեանց դէմ)։
3. Ցեցակեր ըլլալով դժուարընթեռնելի է, ինչպէս նաեւ միւս քառակուսի փակագծեալները։